ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Գավառի պետական համալսարանի 24-րդ գիտաժողովը տեղի կունենա 2021թ. հուլիսի 3-ին:

Գիտաժողովին մասնակցելու համար զեկուցումներն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային տարբերակով մինչև 2021 թվականի հունիսի 3-ը՝ պահպանելով հետևյալ տեխնիկական պահանջները.

1. Գիտական հոդվածը պետք է լինի 5-ից 10 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն՝ համակարգչային շարվածքով, «GHEA Grapalat» տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով), էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները՝ 1սմ:

2. Վերևում անհրաժեշտ է նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, թավ՝ Bold):

3. Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը (թավ), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել նոր տողից):

4. Մեկ տող ներքև՝ 10,5 pt տառաչափով, տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

5. Մեկ տող բաց թողնելով՝ 10 pt տառաչափով, շեղատառ (italic) և թավ ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները:

6. Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «Բանալի բառեր» և նշել 7-10 բանալի բառեր:

7. Բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը, վերջում նշելով նաև խմբագրական խորհուրդ ներկայացման և գրախոսման օրը, ամիսը, տարին, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները:

8. Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերն անհրաժեշտ է հավաքել Microsoft Equation Editor 3.0 ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները (ներկայացնել նկարի տեսքով)՝ 10 տառաչափով, ինչպես նաև հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը:

9. Անհրաժեշտ է ներկայացնել նաև կարծիք հոդվածի մասին, համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության երաշխավորությունը:

10. Հոդվածները, կարծիքներն ու երաշխավորություններն ընդունվում են ԳՊՀ էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեներով.

E- mail: info@gsu.am, infogsu@mail.ru
Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝
(0-60) 46-02-01, (0-60) 46-04-03, (0-60) 46-12-42, (0-264) 2-57-75:

Շնորհակալություն համագործակցության համար:

ԳՊՀ գիտական պարբերականի խմբագրական խորհուրդ